ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

02.03.2019 №18.1.Բ

ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ «ՇՊՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՇՊՀ կանոնադրության 41-րդ կետի 1-ին ենթակետով՝ Շիրակի Պետական Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ Է.

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան Պետական Համալսարան հիմնադրամի ռեկտորի ընտրության» կանոնակարգում 5.20 կետում կատարել փոփոխություն .

Որոշեցին՝ Ռեկտորի ընտրության կանոնակարգում կատարել փոփոխություն 5.20.1 և 5.20.2 կետերում. Եթե քվեարկվել է երկու թեկնածու, ապա ՇՊՀ-ի ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը հավաքել է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի ձայներ, իսկ որեւէ մեկի բավարար քվե չհավաքելու դեպքում քվեարկության երկրորդ փուլ չի անցկացվում:

5.20.2. Քվեարկության երկրորդ փուլն անցկացվում է, եթե քվեարկվել են երեք կամ ավելի թեկնածուներ, և նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, եթե նրանք միասին հավաքել են խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի ձայներ, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները: Եթե առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները միասին չեն հավաքել խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի ձայներ, ապա երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երեք, իսկ երրորդ թեկնածուին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

Քվեարկության հղումը՝ https://youtu.be/-Wewc2R9jhw?t=22974

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ